«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր
Ստեղծողի մոբիլ դպրոց
2017-2018 ուստարի
4-5-րդ դասարաններ
Ուսումնական առաջին շրջանի կազմակերպում

Բովանդակություն	IV		V	
	Շաբ.	Տար.	Շաբ.	Տար.
Ընդհանուր բաղկացուցիչ				
Մայրենի	5	170	5	180
Անգլերեն	2	68	2	72
Ռուսերեն	2	68	2	72
Մաթեմատիկա	4	136	4	144
Բնագիտություն	2	68	2	72
Հայրենագիտություն	2	68	2	72
Երաժշտություն, պար	2	68	2	72
Տեխնոլոգիա	2	68	2	72
Ֆիզկուլտուրա	3	102	3	108
Սովորողի ընտրությամբ բաղկացուցիչ				
Սովորողի ընտրած գործունեություն	4	136	4	144
Տնային ուսումնական աշխատանք	2	68	4	144
Լրացուցիչ կրթություն				

Ուսումնական պլանի պարզաբանումներ

1. Ուսումնական պլանը «Ստեղծողի մոբիլ դպրոց» հեղինակային (պետական այլընտրանքային) կրթական ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) սովորողի ուսումնառության պայմանագրի հավելվածն է:

2. Կրթահամալիրի դպրոց ընդունվում է այն սովորողը, որի ծնողն (օրինական ներկայացուցիչը) ընտրում է Ծրագիրը և սահմանված կարգով պայմանագիր կնքում ուսումնառության մասին:
3. Ուսումնական պլանը կազմված է ընդհանուր, սովորողի ընտրությամբ բաղկացուցիչներից:
4. Դասարանում սովորողների թիվը 20-25 է: Սովորողի ընտրությամբ գործունեությունը կազմակերպվում է 12-15 հոգիանոց խմբերով:
   Նոր դպրոցի դասարաններն ու խմբերը համապատասխանում են ցուցանիշներին

5. Ուսումնական պլանի պարզաբանումներում նշված կարգերը ուսումնական պլանի հավելվածն են: Դրանք դպրոցի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է կրթահամալիրի տնօրենը:

Ուսումնական տարին կազմակերպվում է կրթահամալիրի (դպրոցի, դասարանի, դասընթացի, ակումբի, սովորողի ընտրությամբ գործունեության, լրացուցիչ կրթության) տարեկան ուսումնական օրացույցով: Դրանցով որոշվում են ուսումնական պարապմունքները և ճամբարները, ստուգատեսները, ծեսերը և տոները՝ նաև որպես լրացուցիչ ուսուցում:
Ուսումնական առաջին շրջանում իրականացվող նախագծերը յուրաքանչյուր ամսվա սկզբին հրապարակվել են ենթակայքում. սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր
2017թ. հոկտեմբերի 30-ից նոյեմբերի 5-ը ուսուցումը, սահմանված կարգով, կազմակերպվում է «Ուսումնական աշուն» նախագծով:

6. Ուսումնական տարին սկսվում է 2017թ. օգոստոսի 30-ին:

7. Ուսուցումը կազմակերպվում է ուսուցողական թվային միջոցներ կիրառելով: Դասավանդողը և սովորողը դպրոց են գալիս սահմանված տեխնիկական պայմաններին բավարարող անհատական նեթբուք-նոթբուքով կամ պլանշետով, տանն ունեն համացանց: Ծրագիրը դպրոցում ապահովում է անլար համացանցից, համակարգչից, ձայնագրիչից, ֆոտոխցիկից ուսումնական նպատակներով անարգել օգտվելու հնարավորություն:
Նոր դպրոցում անլար ինտերնետը լավ վիճակում է, սովորողները դպրոց են գալիս անհատական գործիքով, 4-5-րդ դասարանցիները վարում են ուսումնական անհատական բլոգ: Երնթակայքում հրապարակված են սովորողների բլոգների հղումները:

8. Մեդիագրադարանը, դպրոցի գրադարանը, դասավանդողների բլոգները սովորողին տանը և դպրոցում ապահովում են անհրաժեշտ ուսումնական էլեկտրոնային և տպագիր նյութերով, միջոցներով:
9. Սովորողն ունի ուսումնական բլոգ, որում սահմանված կարգով արտացոլվում է նրա ուսումնական գործունեությունը:
4-5-րդ դասարանցիները ունեն ուսումնական բլոգ, որի հղումները հրապարակված են ենթակայքում, 13 նոր ընդունված սովորողների հետ բացվել են բլոգներ, բայց դրանց ինքնուրույն գործածումը ուսուցման փուլում է:
10. Սովորողի ուսումնական առաջադիմությունը, գործունեության արդյունքները, ճամբարներին, ճամփորդություններին, ստուգատեսներին, ֆլեշմոբերին, նախագծերին մասնակցությունը, սովորողի մասին անհրաժեշտ այլ տեղեկություններ սահմանված կարգով էլեկտրոնային գրանցում են ստանում:
Ենթակայքում հրապարակված մատյաններում գրանցվում են:
11. Շրջապատի, նյութական միջավայրի բարելավման, ուսումնական-հասարակական (քաղաքացիական կրթության) նախագծերն իրականացվում են սահմանված կարգով:
Կրթական պարտեզ նախագծով 4-5-րդ դասարանցիների համար բացվել է էլ. Գրանցման մատյան, որտեղ բնագիտության, հայրենագիտության դասընթացներին կազմակերպվում են 4-5 հոգանոց խմբերի աշխատանք բակ-պարտեզում այգեգործ վարպետ Կարոյի հետ:
Սովորողները սկսել են իրենց բլոգներում հրապարակել «Պարտիզպանի օրագիր»:
12. Ուսումնական շաբաթը 5-օրյա է: Ծնողի համաձայնությամբ շաբաթ օրերին կարող են կազմակերպվել լրացուցիչ կրթության պարապմունքներ, հայրենագիտական, ուսումնական ճամփորդություններ, իրականացվել ուսումնական-հասարակական նախագծեր:

Սեպտեմբեր-նոյեմբեր ամսների կազմակերպվել է 2 այսպիսի ճամփորդություն՝ Նեղուց, Թալին:

13. Ուսումնական օրը ներառում է Ծրագրի 15 րոպե տևողությամբ ընդհանուր պարապմունք՝ սահմանված կարգով և ծրագրով:

Ընդհանուր պարապմունքը կազմակերպվում է Նոր դպրոցի սրահում, մասնակիցներն են՝ 1-5-րդ դասարանցիները: Ընդհանուր պարապմունքը սկսվում է առավոտյան 9:00, ավարտվում է՝ 09:15: Յուրաքանչյուր ամսվա 1-ին օրացույցում հրապարակվում է պատասխանատու դասարանների ցուցակը: Պատասխանատու դասարանը բլոգում, ենթակայքում հրապարակում է շաբաթվա ծրագիրը:

14. Ուսուցման կազմակերպման մեջ սահմանված կարգով կիրառվում են առկա, հեռավար, առցանց, տնային ուսուցման ձևեր:
15. Սովորողն ուսումնական գործունեության մեջ օգտագործում է համակարգչային տեքստային խմբագիր, ֆոտոխցիկ, ձայնագրիչ, համացանցում որոնողական ծրագիր, մոնտաժային որևէ ծրագիր, էլեկտրոնային բառարաններ, էլեկտրոնային քարտեզ, սովորում է ներկայացում կազմակարպելու ծրագիր:
4-5-րդ դասարանցիները իրերց անհատական բլոգներում ունեն բաժիններ, որտեղ հրապարակում են իրենց աշխատանքները: 4-5-րդ դասարաններում գործում են «Նոր ռադիոն» «Խճանկար», «Խոշորացույց» ռադիո-խմբարգությունները:
16. «Հայրենագիտությունը» կազմակերպվում է ուսումնական ճամփորդությունների, բանահավաքչության, ուսումնական այլ նախագծերի ձևով, որպես բաղկացուցիչներ ներառում է նաև «Դիցաբանություն», «Հայոց եկեղեցու պատմություն»:
Սեպտեմբեր-նոյեբեր ամիսներ, Սովորողները ճամփորդությունից հետո իրենց անհատական բլոգներում հրապարակում են հաշվետվությունները, Նեղուցի Ս. Աստվածածին,
17. Բնագիտության ուսուցումը կազմակերպվում է լաբորատոր պայմաններում, փորձի հիման վրա, բնագիտական, բնապահպանական, բույսերի և կենդանիների խնամքի նախագծերի ձևով:

18. Երաժշտության ուսուցումը կազմակերպվում է խմբային երգեցողության և պարի, երաժշտության ունկնդրման, համերգների, ծեսերի և տոների մասնակցության ուսումնական նախագծերի միջոցով:
19. «Տեխնոլոգիա» դասընթացը կազմակերպվում է խոհանոցային, բույսերի և կենդանիների խնամքի, դիզայնի, խեցեգործական, առողջության պահպանության, ծեսերի, տոների, ցուցադրությունների, տոնավաճառների մասնակցության ուսումնական նախագծերի ձևով:
Տեխնոլոգիա դասընթացը վարում է տեխնոլոգիայի ուսուցիչը: Սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին սովորողները իրականացրել են բույսերի խնամք կրթական պարտեզում:
20. 4-րդ դասարանում ֆիզկուլտուրան ներառում է մարմնամարզություն, տրիաթլոնի երկու բաղադրիչ՝ վազք և հեծանիվ, ծանոթացում տարբեր մարզաձևերի: Լողալ և հեծանիվ վարել կարողանալը 4-րդ դասարանն ավարտողի պարտադիր կարողություններ են:
Չորրորդ դասարաններում պարապում են՝ Նաիրա Հարությունյան, Գևորգ Հազարումյանը, Միքայել: Պարապմունքները կազմակերպվում են Մայր դպրոցում, Սովորողներին Մայր դպրոց ուղեկցում է կազմակերպիչ՝ Անահիտ Գևորգյանը: Սովորողների խմբերը համապատասխանում են ցուցանիշներին:

5-րդ դասարանում ֆիզկուլտուրան սովորողի ընտրած անհատական կամ թիմային մարզաձևի պարապմունքներն են, մրցումները: Սովորողին առաջարկվող մարզաձևեր են հնգամարտ, տրիաթլոն, ակադեմիական թիավարություն, բայդարկա, կանոե, նետաձգություն, սուսերամարտ, մարմնամարզություն, ֆուտբոլ, բասկետբոլ, վոլեյբոլ, ձեռքի գնդակ:
5-րդ դասարանում սովորում է 58սովորող: Սավորողները ընտրել են հեծավիվ, նետաձգություն, սուսերամարտ, ֆուտբոլ, վոլեյբոլ: Պարապմունքները կազմակերպվում են Դպրոց-պարտեզի խմբերի հետ:

21. Սովորողը անվտանգ գործունեության հմտություններ գործնական եղանակով ձեռք է բերում քայլարշավների, հեծանվային արշավների, բարձունքներ հաղթահարելու, վրանային ճամբարների ժամանակ: Որպես լրացուցիչ կրթություն՝ սովորողը կարող է ընտրել լող, հեծանիվ, սեղանի թենիս:
Դեռ չկան լրացուցիչ կրթության խմբեր: Իսկ ուսումնական ճամփորդությունները, հեծանվային արշավները սահմանված կարգով ստանում են էլ. Գրացում;

22. Տնային ուսումնական աշխատանքը կազմակերպվում է սովորողի և ծնողի համաձայնեցված ընտրությամբ:
4-5-րդ դասարաններում տնային աշխատանքները տեղադրված են ուսուցիչների բլոգներում:

23. Սովորողն իր ընտրությամբ շաբաթական 4 ժամ իրականացնում է գործունեություններից մեկը՝ մեդիալրագրողի, մաթեմատիկոսի, հայրենագետի, մարզիկի, երաժշտություն (սոլֆեջիո, երաժշտական կոմպոզիցիա), բուսաբան-կենդանաբանի, դիզայների, թատերական գործունեություն, բնագիտական-տեխնիկական ստեղծագործություն, կինո-ֆոտոգործ:
4-5-րդ դասարանցիների ընտրությունը կազմակերպվում շաբաթական 4 ժամով՝ 2-ական, երկուշաբթի, չորեքշաբթի, ժամը 13:00-14:25: Ըստ սովորողների անհատական ուսումնական պլանների 4-5-րդ դասարանցիների ընտրությամբ գործունեությունից առաջացել են՝ մաթեմատկոսի՝ 1 խումբ, հայրենագետի՝ 1 խումբ, մարզիկի՝ 1 խումբ, դիզայնի՝ 1 խումբ, բնագիտատեխնիկական ստեղծագործության՝ 1 խումբ: Մարզիկի, Բնագիտատեխնիկական գործունեությունը կազմակերպվում է Մայր դպրոցում՝ մարզասրահներում, լաբորատորիայում: Սովորողներին Մայր դպրոց ուղեկցում է կազմակերպիչը:

24. Լրացուցիչ կրթությունը կազմակերպվում է կրթահամալիրի դպրոցներում, ուսումնական կենտրոններում՝ սովորողի ծնողի հետ կնքվող լրացուցիչ կրթության պայմանագրով, որպես ուսումնառության պայմանագրի հավելված, սահմանված կարգով: Սովորողը կարող է լրացուցիչ ուսուցման դասընթաց ստանալ նաև կրթահամալիրից դուրս, սահմանված կարգով:

25. Դասավանդողի բլոգին, դպրոցի, կրթահամալիրի կայքերին հետևելը և դրանց աշխատանքին մասնակցելը, էլեկտրոնային հասցե ունենալ-վարելը, համացանցային տարածքներից՝ one drive, google drive, dropbox և այլ, օգտվելը, ուսումնական բլոգ վարելը սովորողի ուսումնական աշխատանքն է:
4-5-րդ դասարանցիները վարում են անհատական ուսումնական բլոգ: 10 նոր ընդունված սովորողների հետ աշխատում են հենց սովորողները:

26. Ուսումնական պարապմունքները սահմանված կարգով կազմակերպվում են հիգիենիկ միջավայրում, այդ թվում՝ բացօթյա:

27. Հիգիենիկ պահանջների պահպանումը, ուսումնական ներքին, արտաքին տարածքների, գույքի խնամքը սովորողի ինքնուրույնության և ինքնասպասարկման արդյունք են:

28. Սահմանված կարգով իրականացվող ուսումնական ճամփորդությունները դասընթացների, ընտրությամբ գործունեության, ուսումնական նախագծերի բաղկացուցիչն են:

Ուսումնական ճամփորդություն-նախագծերը հրապարակված են դասավանդողի բլոգում, իսկ ճամփորդությունից հետո սովորողները իրենց բլոգներում հրապարակում են ճամփորդության մասին պատմող ֆիլմ, նյութը, ֆոտոշաքը:

29. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքով սովորողի ուսուցումը կազմակերպվում է անհատական ուսումնական պլանով:
4-5-րդ դասարանում սովորում են 10 կարիքով սովորող, ովքեր մասնակցում են և՛ մարմնակրթության, և՛ ուսճամփորդության պարապմունքներին:

30. Տևական շրջան Հայաստանից բացակայած, տարբեր պատճառներով ուսումնական ծրագիրը չյուրացրած սովորողի համար կրթական ծրագիրը սահմանված կարգով կարող է կազմակերպվել անհատական ծրագրերով:

31. Գնահատումը կատարվում է սովորողի սեպտեմբեր-դեկտեմբերի, հունվարի, փետրվար-մայիսի, հունիսի ուսումնական գործունեության հրապարակված արդյունքներով (ուսումնական բլոգ, ցուցադրություն, համերգ, ֆլեշմոբերի, ծեսերի-տոների, ստուգատեսների, ճամբարների, ճամփորդությունների մասնակցություն): Գնահատումը 10 միավորանոց համակարգով է:

32. Չորրորդ դասարանի վերջում, սահմանված կարգով, անցկացվում են ուսումնական աշխատանքի արդյունքների ուսումնասիրություններ: